ԴԱՎԻԹ-ԲԵԿԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Ա. Մ. ԱՅՎԱԶՅԱՆ

«Ղափանցվոց պատմութեան»[1] նախնական պատումներում ժամանակագրական հաջորդականության պահպանման սկզբունքի, Համապատումի խմբագրման որոշ սկզբունքների և ճշտված դիպաշարի (սյուժեի) մի շարք հանգուցային անցքերի ժամանակի վերհանումը[2] թույլ են տալիս սկսել «Պատմութեան» երեք բնագրերի և 1720-ականների հայոց ազատամարտի կարևոր դրվագների խորացված ուսումնասիրությունը։

Ս. Շահումյանի պատումում կարդում ենք. «Յամին 1171 հայկազեանս թուականի (=1722), յորժամ լուան բնակիչք եօթնաբերդեան գաւառին Խափանու զասպատակն եւ զաւերումն Գանջու և Շամախու, Հայք և Պարսիկ առ հասարակ խռովեցան եւ զահի հարեալ սասանեալ տագնապէին, եւ իբրեւ ամիսս երկուս եւ երիս առ միմեանս երթեւեկս առնել ի միմեանց կասկածէին։ Քանզի զանձինս իւրեանց առ հասարակ ի խնամոց ընդհանրական ընտանի խնամակալութեան բոլորովիմբ լքեալս եւ լուծեալս տեսանէին, եւ վասն այսորիկ քաղաք ի քաղաքէ, ազգ յազգէ եւ իշխան յիշխանէ զկասկածանս թշնամութեան կրեալ տագնապէին, որպէս եւ գրեալ է՝ թէ «Յաւուրսն յայնոսիկ ոչ գոյր թագաւոր Իսրայելի, եւ այր իւրաքանչիւր զհաճոյս աչաց իւրոց առնէր»։ Սոյնպիսի աղէտս չարեաց եւ սոքա կրէին» (ՊՍՇ, էջ 120. հմմտ. Համապատում, էջ 148)։

Այս հատվածի հիման վրա փորձենք վերականգնել դեպքերի ժամանակագրությունը։

Դաղստանի լեռնականները հերթական անգամ ներխուժեցին Շամախու և Գանձակի շրջանները 1722 թ. գարնան սկսվելուն պես. «Եւ յանցանել ձմեռնային սաստկասառոյց գետոյն, և մերձենալ գարնանային քաղցրահոտ շնչմանն... յաւուրս մարտի ամսոյն, մերձ առ մեծի պասեքի Տեառն... ելին ի Դուռն Երկաթի և հասին ի Շամախի»[3]։ Շամախիից լեզգիները «եկեալ բանակեցան ի տեղին ուր Երասխ և Կուր գետքն խառնին ընդ միմեանս հանդէպ բերրի դաշտին Մուղանու։ Եւ զօրագլուխ մի Պարսից զոր Զարխաճի ասէին, և նա բանակեալ էր յոլով զօրօք ի յերկիրն Բարկուշատայ՝ ի վերայ նոյն Երասխայ. նա ի լրոյ համբաւոյ սոցա ինքնահալած եղեւ իբրեւ այր ամբարիշտ, և ի չիք դարձաւ ի տեղւոջէ իւրմէ»[4]։ Այս ամենը տեղի է ունեցել մարտի կեսերին, քանի որ այնուհետև, «յաւուր մեծի շաբաթուն», այն է՝

---

1 Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», աշխատասիրեց Հ. Սամվել վրդ. Արամյան. Վենետիկ—Ս. Ղազար, 1978 (այսուհետև՝ Պատմութիւն Ղափանցւոց)։ Այս հրատարակության բնագրային մասը հոդվածիս շարադրանքի մեջ, համառոտագրություններով, հղելու ենք ըստ հետևյալ հատվածների. ՊՍՇ—Պատում Ստեփան Շահումեանի, էջ 119—130. ՊՏԱ—Պատում Տէր Աւետիք քահանայի, էջ 131—143. Համապատում—Համապատում բնագիր, խմբագրեց Հ. Ղուկաս վրդ. Սեբաստացի, էջ 147—181. Զորացուցակ—Դավիթ-բեկի զորավարների ցանկը և Տեր-Ավետիքին նվիրված ներբողը, էջ 143—145։

2 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 2, էջ 119—134։

3 Տե՛ս Եսայի կաթ. Հասան-Ջալալյան. Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի. Երուսաղեմ, 1868, էջ 35—36։

4 Նույն տեղում, էջ 36։

մարտի 18-ից 25-ի միջև[5], լեզգիները հարձակվում են Դիզակի վրա և «յաւուրս երիս ունայն և թափուր կացուցին զամենալի երկիրն այն ի մարդկանէ և յանասնոց, կոտորմամբ և գերութեամբ»[6]։ Ինչպես ցույց է տվել Հ. Դ. Փափազյանը, «Զարխաճի զորագլուխը» Բարգուշատի և Ղափանի կուսակալ Ֆաթհ-Ալի սուլթանն է, որը նաև պարսկական բանակի «չարխչի բաշի» (առաջապահ զորագնդի հրամանատար) տիտղոսն էր կրում[7]։

Սեֆյանների տերության ընդհանուր քայքայման ետնախորքի վրա Բարգուշատի և Ղափանի կուսակալի զորքի խայտառակ փախուստը, հավանաբար, վերջնականապես խարխլեց Ղափանի հայության վստահությունը պարսկական իշխանությունների նկատմամբ («քանզի զանձինս իւրեանց առ հասարակ ի խնամոց ընդհանրական ընտանի խնամակալութեան բոլորովիմբ յքեայս և լուծեալս տեսանէին») և ուժգին թափ հաղորդեց ինքնապաշտպանական մղումներին ու նաև վաղուց ի վեր խմորվող ապստամբական տրամադրություններին։

Վերը բերված փաստերը համադրելուց հետո կարելի է որոշակիորեն ճշգրտել Ղափանում անիշխանության սկզբնավորման ժամանակը՝ 1722 թ. մարտի վերջ—ապրիլ։ Ա. Շահումյանի նշած երկու-երեք ամիսը, ակներևաբար, այն ժամանակաշրջանն էր, երբ Ղափանի հայկական և մահմեդական զինական ուժերը եռանդով նախապատրաստվում էին անխուսափելի դարձած բախումներին։ Ահա այդ ընթացքում էլ, այսինքն՝ ապրիլից մինչև հուլիս ընկած միջոցում՝ «ի սոյն աւուրս դառնութեան սասանութեան», Ս. Շահումյանը մեկնում է Վրաստան (ՊՍՇ, էջ 120, հմմտ. Համապատում, էջ 148)։

Պատմաբանները հիմնականում համամիտ են, որ Շահումյանի դեսպանությունը «առ Շահնաւազ իշխանն Վրաց» անձնական նախաձեռնություն չէր, ինչպես որ նա պատմել է Մխիթարյաններին[8]։ Լիովին կիսելով Ա. Գ. Մագոյանի տեսակետը, ըստ որի Ս. Շահումյանի պատմածում «կա կեղծիք՝ այն, որ 50 մելիքների փոխարեն Շահումյանն է ստորագրել թուղթը, և դա արված է ոչ սնափառության համար, այլ հեռատեսորեն, նախաձեռնողների խմբին չմատնելու համար։ Չէ՞ որ նրանց մեծ մասը հայրենիքում էր, իսկ պայքարը, եթե մարել էր, չէր ավարտվել»[9], կարծում ենք, որ Ղափանում տիրող անիշխանության երկու-երեք ամսվա միջոցին (1722 թ. ապրիլ-հունիս) կայացած պիտի լինի Ղափանի հայ պարագլուխների մի իրական խորհրդաժողով, որն էլ հայտնի խնդրագրի հետ միասին Ստեփանոսին դործուղել է Քարթլիի թագավոր Վախթանգ VI-ի և նրա որդի Շահնավազի

---

5 Մեծ կամ ավագ շաբաթ է կոչվում Ծաղկազարդի և Զատկի միջև ընկած յոթ օրը (տե՛ս Մ. Օրմանյան. Ծիսական բառարան. Անթիլիաս, 1957, էջ 12—13), իսկ 1722 թ. զատիկը եղել է մարտի 25-ին։

6 Ե ս ա յ ի կ թ. Հ ա ս ա ն-Ջ ա լ ա լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 36—37։

7 Տե՛ս Հ. Դ. Փ ա փ ա զ յ ա ն. Դավիթ-բեկի պայքարը օսմանյան ներխուժման դեմ և հարաբերությունները իրանական հակաօսմանյան դիմադրական ուժերի հետ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 1, էջ 93—96։ Հետևապես, ճիշտ չէր Ն. Ադոնցը Ֆաթհ-Ալի սուլթանին համարելով «հասարակ ցեղապետ», որը «պետական պատասխանատու պաշտոնյա» չէր և գրելով, որ Ղափանը «ենթակա էր Նախճվանի խանի իրավասության» (Ն. Ա դ ո ն ց. «Դավիթ-բեկ» վեպի պատմական հիմը և գաղափարախոսական արժեքը.—Տե՛ս Բաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան). կյանքը, գրականությունը, հիշողություններ. Փարիզ, 1937, էջ 136, 139, 140)։

8 Տե՛ս Լ ե ո. Երկերի ժողովածու (տասը հատորով). հ. 3, Հայոց պատմություն, դիրք 2. Երևան, 1973, էջ 179։ П. Т. А р у т ю н я н. Освободительное движение армянского народа в 1-ой четверти XVIII века. М., 1954, с. 250—251. Հ. Ա. Կ ն յ ա զ յ ա ն. Ազատագրական պայքարը Դավիթ-բեկի գլխավորությամբ. Երևան, 1963, էջ 77—78։ Ա շ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Դավիթ-բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը.—«Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 1, էջ 96—98։

9 Ա. Գ. Մ ա գ ո յ ա ն. Դիտողություններ Դավիթ Բեկի ապստամբության պատմության շուրջ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 3, էջ 188։

(Բակուրի) մոտ։ Ընդ որում, պարտադիր չէ, որ դրան մասնակցած կամ համաձայն լինեին Ղափանի բոլոր հայ «տանուտերերը» և չի բացառվում, որ ոմանց կնիքները իրոք կեղծված լինեն։

* * *

Ինչպես գիտենք, Տեր-Ավետիքն իր պատումն սկսում է Եռաբլուրի բախումից, բաց թողնելով Ս. Շահումյանի հիշատակած՝ Դավիթ-բեկի Սյունիք մտնելուց հետո Սիսիանում և Նախիջևանի դեմի վրա տեղի ունեցած դեպքերը[10]։ Ս. Շահումյանն, իր հերթին, շրջանցում է ՊՏԱ-ում նկարագրված՝ Եռաբլուրի (Ուչթեփեի) առաջին բախումից մինչև Դավիթ-բեկի Տաթև տեղափոխվելը կայացած անցքերի մի ամբողջ շարան (տե՛ս ՊՏԱ, էջ 131_5—132_{10})[11]։ ՊՍՇ-ի և ՊՏԱ-ի շարադրանքը միահյուսվում է հաջորդ հանգույցում. երկու պատումներում էլ Թորոսը ներկայանում է Դավիթ-բեկին վերջինիս Տաթևի բերդ տեղափոխվելուց հետո (տե՛ս ՊՍՇ, էջ 121—122. ՊՏԱ, էջ 132)։

Ինչո՞վ կարելի է բացատրել, որ Ս. Շահումյանն իր պատումում չի խոսում Նախիջևանի խանի հետ առաջին ճակատամարտից մինչև Դավիթ-բեկի Տաթև տեղափոխվելն ընկած ժամանակամիջոցում տեղի ունեցած անցքերի մասին։

Ամենայն հավանականությամբ, Նախիջևանի դեմի վրա կայացած մարտից անմիջապես հետո Շահումյանը մեկնել էր իր բնակատեղին՝ Գուրհամ գավառի Եկդաստանց կամ Վանք գյուղը[12], որտեղից և լայն գործունեություն

---

10 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 2, էջ 119—130։

11 Այս հատվածում դեպքերի չոր և խտացված մատուցումը ուղեկցվում է պատմողի՝ ժամանակագրական հաջորդականության սկզբունքի խստիվ կիրառումը բնորոշող և հաստատող հետևյալ արտահայտություններով. «մարտեաւ ղառաշինն», «եւ ապա եկեալ», «եւ զայն տեսեալ», «յետ այսորիկ», «յետ յերկուց աւուրց» և այլն։ Համապատում բնագրում ժամանակագրությունը խախտված է. Թորոսը ներկայանում է Դավիթ-բեկին Մխիթար սպարապետի կողմից Քուրդլար ավանի ավերումից հետո՝ նախքան Տաթևի հավատուրաց մելիքի գլխատումը (տե՛ս Համապատում, էջ 150—151)։ Ժամանակագրական կարգի այս խախտումը չի համապատասխանում նախնական պատումներից և ոչ մեկին, ուստի այն պետք է համարել սխալ և կամայական։

12 ՊՍՇ-ում նշված է, որ Ս. Շահումյանն «ի կողմանցն Կալերու վանքեցի» էր (էջ 120)։ Համապատումը փոքր-ինչ հստակեցնում է՝ «Վանքեցի, ի կողմանցն Կալերու» (էջ 148)։ Ա. Գուլամիրյանցի հրատարակությունում, որի հիմք ձեռագիրը Համապատումի՝ 1759 թ. առաջ գրված մի օրինակից արված ընդօրինակությունն է (տե՛ս Անդրանիկ Տեր-Ներսեսյան. Դավիթ-բեկ, Ընտիր պատմություն (1722—1729 թթ.), հրտ. փրոֆ. Լ. Գ. Խաչերյան. Լոս Անճելես, 1988, «Բազմավեպ», 1989, թ. 1—4, էջ 416, 427. հմմտ. Արսէն վրդ. Ղլդճյան. Նյութեր Դավիթ-բեկի պատմության վերաբերյալ.—«Արարատ», ԼԸ, 1905, թ. 4, էջ 383) ասված է, որ Ստեփանոսն՝ էր «ի գաւառէն Փոքր Սիւնեաց, և յաւանէն Եկդաստանց» (Դաւիթ Բէգ. Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին եւ պատերազմաց Հայոցն Խափանու..., Վաղարշապատ, 1871, տիտղոսաթերթ. Համապատումի մեզ հասած ձեռագիր ընդօրինակությունների տիտղոսաթերթերի համադրությունը տե՛ս Ա. Տեր-Ներսեսյան. նշվ. աշխ., էջ 429)։ Մինչդեռ, «Պատմության» ո՛չ նախնական և ո՛չ Համապատում բնագրերում Եկդաստանցն ընդհանրապես չի հիշվում։ Այս տեղեկությունը Գուլամիրյանցի հրատարակության հիմք ձեռագրի մեջ կարող էր թափանցել երկու ճանապարհով. ա. 1759-ից առաջ գյուղանաբնակ Ապրոյան ընտանիքի պատվերով Համապատումից ընդօրինակող «մխիթարյան անանուն միաբանը» (Ա. Տեր-Ներսեսյան. նշվ. աշխ., էջ 416), հնարավոր է, առիթ էր ունեցել անձամբ շփվելու Ս. Շահումյանի (ստուգապես հայտնի է, որ վերջինս գեթ մինչև 1750-ականների վերջերը Վենետիկում էր. Տե՛ս Ղ. Ալիշան. Սիսական, Վենետիկ, 1893, էջ 302) կամ նրան մոտից ճանաչող մարդկանց հետ և այդտեղից քաղելու Ս. Շահումյանի եկդաստանցի լինելու մասին տեղեկությունը. բ. նշված ընդօրինակությունը «1759 թ. Ղափանցի Հովակիմ Ռափայելյանը Զմյուռնիայում տեսել է Աստվածատուր Ապրոյանի «տան անկեան խորշում» և Դանիել

էր ծավալել Հարևան Զավնդուր և Կենավուզ գավառների ավագանուն Դավիթ-բեկի շարժմանը միացնելու ուղղությամբ։ Կարծում ենք, մասամբ հենց Շահումյանի ջանքերի շնորհիվ էր, որ Դավթին առաջինը միացածները Զավընդուրի և Կենավուզի հայ առաջնորդներն էին (տե՛ս ՊՍՇ, էջ 122—123. հմմտ. ՊՏԱ, էջ 132. Համապատում, էջ 150)։ Հիշեցնենք Ս. Արամյանի բնագրագիտական քննության եզրահանգումն առ այն, որ Ս. Շահումյանն ու Տեր-Ավետիքը, առհասարակ, ավելի ուշադրություն են դարձրել այն մարտերին, որոնց անձամբ մասնակցել են (տե՛ս Պատմութիւն Ղափանցւոց, Առաջաբան, էջ 81—83)։ Ինչպես դիտենք, Ս. Շահումյանը չէր պատմել Որոտնա բերդի գրավման և Նախիջևանի խանի հետ Դավիթ-բեկի զորքի 1724 թ. մարտի վերջի—ապրիլի սկզբի բախման մասին նույն՝ իր այդ դեպքերին չմասնակցելու պատճառով[13]։

Պետք է հաշվի առնել նաև այն իրողությունը, որ Ղափանի ապստամբության տարիներին այնքան մեծ ու փոքր ճակատամարտեր են եղել, որ դրանց բոլորի թվարկումը մասնակիցներին աննպատակ պիտի թվար։ Նրանք հիշատակել և նկարագրել են, թերևս, ամենավճռորոշ մարտերը և կամ՝ որոնց իրենք անձամբ մասնակցել կամ ինչ-որ առումով սերտորեն առնչվել են (ինչպես, օրինակ, Տեր-Ավետիքը չի մասնակցել Դավիթ-բեկի առաջին կռիվներին, բայց, բնակվելով Հալիձորում, բնականաբար, ակնդետ հետևել է մերձակայքի անցուդարձին և հետագայում պատմել մխիթարյաններին)։

1722 թ. Շահումյանի վերը մեր ենթադրած քարոզչական գործունեությամբ կարելի է բացատրել նաև Դավիթ-բեկի հատուկ վերաբերմունքը նրա նկատմամբ. այսպես, պատեհ առիթից օգտվելով, Դավիթ-բեկը շնորհում է նրան «զերկիր և զիշխանութիւն երից Մելիքաց» (ՊՏԱ, էջ 134). իմանալով Սահականոսի գերության մասին՝ սուգ է անում (Համապատում, էջ 165) և քիչ է մնում դիմատել տա Մխիթար սպարապետին (ՊՏԱ, էջ 135. հմմտ. Համապատում, էջ 165), իսկ տեղեկանալով նրա փախուստի մասին՝ «հրամայեաց երկու օր հանդիսութիւնս առնել» (ՊՏԱ, էջ 135). «եւ էր սիրելի յաչս Դաւթի, վասն իւրոյ քաջութեան եւ ազնուականութեան» (Զորացուցակ, էջ 143)։

* * *

Այժմ քննենք Դավիթ-բեկի Հայաստան գալու ժամանակի խնդիրը։ Ինչպես արդեն իսկ արձանագրված է Համապատումում, Դավիթ-բեկը եկել է Սյունիք 1722 թ. (Համապատում, էջ 149)։ Մեր տրամադրության տակ, սակայն, այս հաղորդումն առավել սեղմող երկու սահմանազատիչ ժամկետ կա.

1. Նախորդ քննությունը ցույց տվեց, որ 1722 թ. մարտի վերջից մինչև հունիս-հուլիս ամիսները Ղափանում անիշխանություն էր տիրում։ Մայիս-հունիսին Ս. Շահումյանը Ղափանի հայության խնդրագրի հետ միասին գործուղվում է Վրաստան՝ Վախթանգ VI-ի և նրա որդի Շահնավազի մոտ։ Այսպիսով, Դավիթ-բեկի ժամանումը Սյունիք 1722 թ. առաջին կեսին բացառվում է։

2. ՊՍՇ-ում գտնում ենք մի տեղեկություն, որը մեզ թույլ է տալիս վստահորեն առանձնացնել Ղափանում մինչև 1723 թ. գարունը տեղի ունե-

---

անունով դպրի ձեռքով իր համար պատրաստել է մի նոր օրինակ, որից ծագում են Երևանի Մատենադարանի թիվ 3297, 4598, 6835, Լենինգրադի Արևելագիտության հիմնարկի B—29, նաև՝ Երևանի թիվ 10579 ձեռագիրը. վերջինիցս էլ արվել է Ա. Գուլամիրյանի հրատարակությունը» (Ա. Տեր-Ներսեսյան. նշվ. աշխ., էջ 416. հմմտ. Ա. Աբրահամյան. «Դավիթ-բեկի պատմության» նախագաղափար բնագրի շուրջը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, էջ 191—202)։ Արդ, Հովակիմ Ռափայելյանն ինքը՝ Եկդասան ավանից էր (տե՛ս Ա. Վ. Ղլդեանց. նշվ. աշխ., էջ 385) և, իրազեկ լինելով Շահումյանի ծննդավայրի մասին, իր իմացածը կարող էր արձանագրել տալ պատվիրված օրինակում, որտեղից էլ այն կանցներ նոր ընդօրինակությունների մեջ։

13 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 2, էջ 130—133։

ցած իրադարձությունները։ Ս. Շահումյանը հաղորդում է, որ Թորոսի Տաթևից Զավնդուր վերադառնալուց հետո որոշ ժամանակ անց սկսվում է գարունը. «Յետ այսորիկ աւուրքն աւուրք գարնանային...» (ՊՍՇ, էջ 122)։ Այս կարևոր ծանուցումը դուրս է մնացել Համապատումի համապատասխան հատվածից, ուր սոսկ նշված է՝ «Եւ դէպ եղեւ յաւուրսն յայնոսիկ...» (էջ 154)։

Արդ, վերը պարզվեց, որ Թորոսի՝ Դավիթ-բեկի մոտ ներկայանալուն նախորդող դեպքերը մասամբ շարադրված են Ս. Շահումյանի, և մասամբ՝ Տեր-Ավետիքի կողմից։ Որոշված է նաև դրանց հաղորդականությունը։ Ստորև նշում ենք Դավիթ-բեկի գլխավորությամբ սյունեցիների զինված ընդվզման սկզբից մինչև 1723 թ. գարունը Ղափանում տեղի ունեցած գլխավոր անցքերը. Դավիթ-բեկը 2000 զորքով դուրս է գալիս Վրաստանից և շարժվում դեպի Սյունիք. Սիսիան գավառում զորահավաք է անցկացնում, այնուհետև Նախիջևանի գետի վրա ճակատամարտ է տալիս Նախիջևանի խանի զորքերի հետ. Սիսիանից բուն Ղափան անցնելու ճանապարհին Եռաբլրի (Ուշ-Թեփեի) սարավանդում շախշախում է Ղարաշոռլու ցեղին, ապա հաստատվում է Շնհերում. որոշ ժամանակ անց նույն Եռաբլրում երեքօրյա ծանր մարտերից հետո հաղթում է Ջիվանշիր ցեղի քոչվորներին. Մխիթար սպարապետին ուղարկում է Քուրդլար ավանն ավերելու և, վերջապես, պաշարում և գրավում է Տաթևի հավատուրաց մելիք Բաղիրի (Պաղերի) բերդը, գլխատում նրան և իր նստավայրը տեղափոխում Տաթև։

Եթե նկատի ունենանք, որ ձմռան ամիսներին ճանապարհները ձյունով ծածկվելու հետևանքով հնարավոր չէր ակտիվ ռազմական գործողություններ ծավալել[14], ապա ընդունելու ենք, որ վերը նշված անցուդարձերը պետք է ընդգրկեն առնվազն 1722 թ. աշնան ամիսները։

Մինչև 1722—1723 թթ. ձմռան սկսվելը հայերի Սյունիքում ձեռք բերած նշանակալից ռազմական հաջողությունների մասին վկայում է նաև Թիֆլիսից 1722 թ. դեկտեմբերի 12-ին Մինաս արքեպիսկոպոս Փերվազյանի գրած մի նամակը. «Ղարապաղումն կամ Խափանու յերկիրն միարանեալ Հայքն յուր ուրեք որ Թուրք գտնում են, զամէնն անխնայրար կոտորում են, և զիւրեանքն պահում են...»[15]։

Հաշվի առնելով վերոշարադրյալը և Ս. Շահումյանի Վրաստան ուղևորվելը 1722-ի մայիս-հունիսին, կարող ենք առայժմ մակաբերել, որ Դավիթ-բեկը Սյունիք է ժամանել 1722 թ. հուլիս-սեպտեմբերի միջոցին։

Շարունակենք. ինչպիսին էր այդ պահին քաղաքական իրադրությունն Այսրկովկասում։

---

14 XVIII դարում Ղափանում ձյան գալու դեպքում, նույնիսկ մարտ ամսին, ճանապարհներն անանցանելի էին դառնում (տե՛ս Աբրահամ Կրետացի. Պատմություն, աշխ. Ն. Կ. Ղորղանյանի. Երևան, 1973, էջ 154)։ Թ. Խ. Հակոբյանը նշում է, որ միջնադարյան «Սյունիքի բոլոր ճանապարհները, գրեթե առանց բացառության, ձմռան ամիսներին փակվում էին» (տե՛ս Թ. Խ. Հակոբյան. Հայաստանի պատմական աշխարհագրություն. Երևան, 1984, էջ 183. հմմտ. նույնի՝ Սյունիքի թագավորությունը (պատմա-աշխարհագրական առումով). Երևան, 1966, էջ 9—10, 89, 100։ Ստ. Լիսիցյան. Զանգեզուրի հայերը. Երևան, 1969, էջ 84)։ Ուշ աշնանից սկսած, ձնաբուքը փակում էր Զանգեզուրի ճանապարհները նաև 1918—1920 թթ. (տե՛ս Richard G. Hovannisian. The Republic of Armenia. V. II, Berkeley—Los Angeles—London, 1982, p 210)։ 1720-ականներին Ղափանում և նրան հարող տարածաշրջանում ռազմական գործողությունները գրեթե միշտ սկսվել են գարնանը։ Այդ թվականների ձմեռային ամիսներին պատերազմ վարելու դժվարությունների մասին տե՛ս, օրինակ, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմ., ներածություններ Ա. Խ. Սաֆրաստյանի. հ. Ա, 1961, էջ 159։ Mary L. Shay. The Ottoman Empire from 1720 to 1734 As revealed in despatches of the Venetian Baily. Urbana, 1944, p. 96.

15 Армяно-русские отношения в 1-ой трети XVIII века, сборник документов. Т. II, часть II, под редакцией Аш. Иоаннисяна, Ереван, 1967 (այսուհետև՝ АРО, т. II, ч. II), док. 169, 170, с. 20, 22.

Սեֆյանների տերության քայքայումը, լեզգիների արշավանքները, օսմանյան ու ռուսական ներխուժման վտանգը չափազանց լարված և անկայուն կացություն էին առաջ բերել։

1722 թ. մայիսի 28-ին Քարթլիի թագավոր Վախթանգ VI-ը Դանձակի մերձակայքում գտնվող Զոլակ բանակատեղիից վերադարձավ Թիֆլիս՝ «մնալով անդ ամիսս չորս։ Եւ ի մտանել աշնան, յամսեանն սեպտեմբերի սկսաւ կրկին դառնալ ի Դանջա Վախտանկ»[16]։ Ըստ Եսայի կաթողիկոսի, որն այդ ամբողջ ընթացքում Վախթանգի հետ էր, իրենց Թիֆլիսում գտնվելու ժամանակ ստացվել է Վախթանգին Այսրկովկասի ռազմական ուժերի գերագույն զորահրամանատար նշանակելու մասին պարսից շահի (Սուլթան Հուսեյնի) հետևյալ հրովարտակը. «Քեզ ետու զամենայն իշխանութիւն կողմանցդ Դանջայու, և ամենայն Ատրպատականի, և զքեզ կարգեցի գլուխ և սպարապետ ամենայն իշխեցողաց կողմանցդ այդոցիկ. վասն որոյ շնորհակի զօրս դումարեալ գայցես ի Դանջայ, և պահ կալեալ զգուշասցիս կողմանցդ այդոցիկ ի թշնամեաց մերոց»[17]։ Այս դեպքի մասին լրացուցիչ տվյալներ էլ ունենք։ Արևելահնդկական ընկերության ներկայացուցիչ Պոռեկարի՝ Սպահանից 1722 թ. հունիսի 28-ին (նոր տոմարով) Եղիա Մուշեղյան Կարնեցուն հղած նամակում կարդում ենք. «Թէ հարցանես Հադիրբեջանա[18] սարդարն մանղուլ ա եղեր (պաշտոնանկ է եղել—Ա. Ա.), սարդարութիւն Վրացտանու վալուն են տվել, ուրիշ տեղ էլ շատ են տվել, շահն թաջ և թօմարն ողորկել ա, որ ԲՌ (2000) թուման կարժէ[19], մին ջավայիրէ թուր, որ ԲՃ (200) թուման կարժէ, էստուր հետ էլ մին ձեռք լաւ պատուական խալաթ»[20]։ Եղիա Կարնեցին Սպահանից դուրս էր եկել հունիսի 19-ին (նոր տոմարով)[21], ուրեմն Վախթանգին «Ադրբեջանի սարդար» նշանակելու որոշումն ընդունվել էր 1722 թ. հունիսի 19-ից մինչև 28-ը (հին տոմարով՝ հունիսի 8-ից մինչև 17-ը)[22]։ Մոտավոր պատկերացում կազմելու համար, թե հրովարտակը ե՞րբ կարող էր հասնել Թիֆլիս, նշենք, որ «վրացու չափառները (սուրհանդակներն—Ա. Ա.), որ ասում են թէ Վախտանկ խանին համար թաճ ու թումար են տանում», Թավրիզ են հասնում միայն հուլիսի 29-ին[23] (հին

16 Եսայի կաթ. Հասան-Ջալալյան. նշվ. աշխ., էջ 44։

17 Նույն տեղում, էջ 45—46։

18 Խոսքն Իրանի «Ադրբեջան» բեկլարբեկության մասին է (կենտրոնը՝ Թավրիզում), որին ենթակա էին Այսրկովկասի բոլոր ռազմական ուժերը։

19 XVII դարի վերջում—XVIII դարի սկզբում մեկ թումանը 1000 կոպեկ էր (տե՛ս Դանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի. Ամստերդամ, 1699, էջ 27), որն անում է 432 ոսկի ռուբլի (տե՛ս Ռ. Է. Զուդասոյան. Եղիա Մուշեղյանի եվրոպական դեսպանությունը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 4, էջ 86, ծան. 17)։

20 Եղիա Կարնեցու դիվանը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի. Երևան, 1968, էջ 127։

21 Նույն տեղում, էջ 125։

22 1722 թ. հուլյան և գրիգորյան օրացույցների տարբերությունը՝ Գրիգորիս III պապի 1582 թ. ռեֆորմից հետո, արդեն ավելացել էր մեկ օրով և կազմում էր 11 օր (տե՛ս Ա. Գ. Աբրահամյան. Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 138. հմմտ. Է. Բ. Աղայան. Ակնարկներ հայոց տոմարների պատմության. Երևան, 1986, էջ 214)։ Եղիա Կարնեցու նամակագրությունը եվրոպացիների հետ ընդհանրապես տարվում էր նոր տոմարով. Կարնեցին հարկ էր համարում հատուկ նշել նոր տոմարի գործածումը հուլյան օրացույցը պահպանած հայկական կամ ռուսական շրջապատի հետ գրագրություն վարելիս միայն (տե՛ս Եղիա Կարնեցու դիվանը, էջ 116, 137, 187, 198, 200, 201, 213, 257)։ Այսպես, իր Թավրիզ հասնելու մասին, 1722 թ. հուլիսի 14-ին, Եղիա Կարնեցին առանձին նամակներով ծանուցում է Պոռեկարին, Ճիզվիտ հոգևորականներ Էգարտին և Դուֆրենին, Իրանում ֆրանսիական դեսպան Գառդանին, իր հորեղբոր որդի՝ վաճառական Ղազար Մարդարյանին և միայն վերջինիս է հիշեցնում, որ ի նկատի ունի նոր տոմարի հուլիսի 14-ը՝ «յուլիսի 14 նոր տօմարի հասա Թարվէզ» (տե՛ս նույն տեղում, էջ 129, 132, 134, 136, 137)։ Այս երևույթը բացատրվում է նրանով, որ Եղիա Կարնեցին ինքը կաթոլիկ էր։

23 Եղիա Կարնեցու դիվանը, էջ 138։

տոմարով՝ հուլիսի 18-ին)։ Հրովարտակի ստացման ժամանակն առավել ոստոյակիանում է 1722 թ. օգոստոսի 15-ին Թիֆլիսից հղված մի նամակի շնորհիվ, որում Վախթանգը հայտնում է ռուսաց կայսրին, որ վերջինիս ուղերձը, որը բերել էր իշխան Թուրքեստանիշվիլին, իրեն է հասել շահի հրովարտակի հետ միաժամանակ. «Когда получили мы премощный вашего величества указ к нам, в то время и от шаха почта к нам прибыла, которой пожаловал и учинил меня снасаларем над рижебежанскою провинцею...»[24]: Բորիս Թուրքեստանիշվիլին Թիֆլիս էր ուղևորվել Աստրախանից 1722 թ. հուլիսի 2-ին[25]։ Արդ, այս ամենից կարող ենք աներկբայորեն եզրակացնել, որ շահի հրովարտակը հասել է Թիֆլիս 1722 թ. հուլիսի վերջին—օգոստոսի սկզբին։

Հրովարտակն ստանալուն պես Վախթանգը ձեռնամուխ է լինում նրանով նախատեսված, բայց իրականում հայ-վրացական ազատագրական շարժման նպատակներին ծառայող, մեծ զորահավաքի անցկացմանը. «Եւ իսկոյն հրաման եհան զօրս գումարել, և վաղվաղակի ժողովեալ զբազմութիւն զօրաց աղդացն Վրաց և Հայոց, և ոչ ոք եթող զոր ոչ եբարձ ընդ իւր... Եւ ելեալ ի Տփխիսու անբաւ ամբոխիւ, զոռոյ ոռֆանութիւնն անբաւ գոլով՝ ոչ կարացաք գրել.. »[26]: (Ընդգծումը մերն է—Ա. Ա.)։

Ինչպես տեսնում ենք, այդ «անբավ» զորքի[27] մի մասը կազմում էին հայ ռազմիկները, որոնցից շատերն, ըստ երևույթին, թիֆլիսեցի էին. նկարագրելով ավելի ուշ՝ 1722 թ. դեկտեմբերին Մուհամմեդ-զուլի խանի դեմ Թիֆլիսում ծավալված մարտերը, Եսայի կաթողիկոսը նշում էր, որ Վախթանգի զինվորների նշանակալի մասը դարձյալ Թիֆլիսի հայերն էին. «Եւ նա ժողովեաց զզօրս իւր, մանաւանդ զքաղաքացիսն, զհայազուն քաջամարտիկ զօրականսն, որք զհոգիս և զորդիս, զինչս և զանձինս եդեալ էին ի վերայ նորայ հօժար սրտիւ», որից հետո Վախթանգը կոչում է «վրացի և հայ զօրօք, իսկ Մհամմատզուլին՝ պարսկօք»[28]։

Ահավասիկ, այդ մեծ զորահավաքի ժամանակ էր հնարավոր առանց դժվարության 2000 հայ մարտիկ տրամադրել Դավիթ-բեկին: Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վախթանգի բանակը Թիֆլիսից դուրս եկած պիտի լինի սեպտեմբերի առաջին կեսին (1722 թ. սեպտեմբերի 20-ին Վախթանգն արդեն Գանձակում էր)[29], եզրակացնում ենք, որ Դավիթ-բեկը Սյունիք է հասնելու զորահավաքի անցկացման սկզբից մինչև Թիֆլիսից Վախթանգի բանակի դուրս գալու պահն ընկած օրերից որևէ մեկին, այսինքն՝ 1722 թ. հուլիսի վերջից մինչև սեպտեմբերի կեսերն ընկած ժամանակահատվածում:

Ըստ Ա. Շահումյանի, Հայաստան ուղղվող առանձին զորամասի կազ-

---

24 АРО. т. II, ч. II, док. 165, с. 9: Շահի խնդրո առարկա հրովարտակի մասին վերը նշված բոլոր աղբյուրներն անհայտ են մնացել նորերս լույս տեսած հետևյալ հրատարակության կազմողներին՝ տե՛ս Тбилисская коллекция персидских фирманов, т. II, составители М. А. Тодуа и И. К. Шамс. Подготовка к печати, перевод, комментарии и словарь М. А. Тодуа. Тбилиси, 1989, с. 1021, пункт 182:

25 АРО, т. II, ч. II, док. 165, с. 7.

26 Եսայի կաթ. Հասան-Ջալալյան. նշվ. աշխ., էջ 46—47։

27 Երից մանկանց Ներսես կաթողիկոսը և Եղիա Մուշեղյան Կարնեցին այդ զորքի թվաքանակը համարում են 50—60 հազար ռազմիկ (տե՛ս АРО, т. II, ч. II, док. 175, с. 26. Եղիա Կարնեցու դիվանը, էջ 186, 192)։

28 Եսայի կաթ. Հասան-Ջալալյան. նշվ. աշխ., էջ 53։ Հայ ռազմիկների դերությունը Վրաստանում դեռևս XVII դարում վկայում են Զաքարիա Քանաքեռցին և Փարսադան Գորգիջանիձեն (տե՛ս Զաքարիա սարկաւագ. Պատմագրութիւն. հ. 2, Վաղարշապատ, 1870, գլուխ ԽԸ, էջ 96—98։ Լ. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. հ. Բ, Երևան, 1936, էջ 114, 116)։

29 Армяно-русские отношения в 1-ой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. I, под редакцией Аш. Иоаннисяна. Ереван, 1964, с. XXXVI:

մակերպումը ղեկավարել է ինքը Դավիթ-բեկը. «Եւ եկ նա յերեսաց իշխանին Վրաց եւ դնաց ժողովեաց իւր զօրս երկու հազար սպառազինաց եւ զքսան հարիւրապետս...» (ՊՍՇ, էջ 121)։ Նկատի ունենալով Համապատումի այն հաղորդումը, թե «իբրեւ ելանէր նա (Դավիթ-բեկը—Ա. Ա.) յերկրէն Վրաց, առ նա ժողովէին ամենայն ազգ զօրութեանց յամենայն կողմանց գաւառին, որք լսէին զնմանէ» (էջ 149), կարծում ենք, որ այդ զորքի հավաքագրումը կատարվել է կամավորական սկզբունքով։

Այս առումով ուշագրավ է այն ծրագիրը, որով Դավիթ-բեկը մտնում էր Հայաստան։ Նախ, նա գնում էր Ղափան՝ այնտեղ արդեն գոյություն ուներ հայ ռազմական որոշակի ուժ, որը նրան պաշտոնապես հրավիրել էր և որի վրա կարելի էր հենվել։ Երկրորդ՝ 1722 թ. Լիմ անապատում կայացած ժողովի մասին հայտնի հիշատակարանը որոշ պատկերացում է տալիս, թե ինչ մթնոլորտում էր սկսվում և ինչ հեռանկարներ ներշնչում Դավիթ-բեկի «զօրաշարժութիւնը». «Քաջահամբաւ և արիասիրտ վարդապետ մի՝ յերկրէն Ուշտունեաց տէր Ներսէս անուանեալ, յոյժ յուզեալ և լալագին պատկերացոյց դառնակսկիծ վիճակս համօրէն ազգիս և յայտնեաց ցնծագին՝ թէ այր մի երկրէն Սիւնեաց Դաւիթ բէկ անուանեալ, զօրաշարժութիւն արարեալ իցէ վասն հալածելոյ նեզիչք և կշտամբիչք մեր, միտս ունենալով ազատագրելոյ արիւնածուփ զաշխարհն Հայաստան։ Արդ, ով բարեմիտ և հայրենապաշտ ժողովականք, շրջեսցէք գաւառս և ի կողմանս յերկրին ձերոյ խրախուսեցէք ժողովուրդք ձեր, որ մրափեալ է ի խոր խաւարի և տանջանաց, զի թօթափեսցին զլուծ անիրաւաց բռնութեանցս, և յորժամ մեք առաքեսցուք զհրաւէր մարտի, բառնան ձայն ապստամբութեան ընդդէմ մարդակեր և խաշահալած թշնամեաց մերոց։

«Զկնի աւարտման զայս քաղցրալուր ճառասացութեանս՝ ժողովրդականք յոյժ վշտացեալ արտասուէին լռելեայն։

«Եւ եղեն զրուցանողք բազումք՝ կարծիք բազմազանս, առաջարկս անհամարս։ Յետ այնորիկ՝ իշխանք և պարոնք և մելիքք և տանուտէրք յօժարեսցին վասն պատերազմի հաւաքելոյ զայրս բազումք քաջակորով և կռուարար, և հայթայթելոյ ուտեստս կռուապաշարոյ, սայլք և նժոյգս բազումս և պէտս բազմազանս, դամուրս (երկաթ) և նաւս և բուրդս և ցորեանս և ոչխարս։

«Ամենայն [օր] երիցս դամ (անգամ) միարանք սբ. Մենաստանիս մեծարեն պատգամաւորս աղ ու հացիւ և ընտիր ուտելեօք։ Զկնի զայս հաւաքման, զոր կատարեցաւ երիցս, եօթներորդ օր՝ նաւ մի եկեալ ի գեղջէ Աւանց կոչեցելոյ և գիշեր մի լուսնակազարդ՝ պատգամաւորք տեղաւորեսցին ի մէջ նաւին և ուղևորեսցին զծովապատ և զանառիկ կղզին յԱզթամար, առ ոտս վեհապատիւ Տէր Յովհաննէս կաթողիկոսի Հայոց Ջորեցւոյ, յորում յայտնեալ իցեն զմեծախորհուրդ ձեռնարկս իւրեանց։ Աստուածընտիր կաթողիկոսն զտէր Յովհաննէս համաձայնաբար յօժարեալ իցէ շնորհեալ զկամս իւր, օրհնելով զպատգամաւորս, որք առաքինաբար զոհելոյ յանձն առեալ իցեն զկեանս իւրեանց, վասն ազատելոյ յաշխարհս Վասպուրական, ի լուծոյ բռնաւորաց և փաշաներաց և բեկերաց և աղաներաց։

«Տէր Աստուած կատարեսցէ զգործս ձեռաց իւրեանց, տածցէ յաջողութիւն նոցա գործելոյ և ազատելոյ ծովազարդն և զգեղատեսարան զաշխարհն մեր Վասպուրական, յորում յայսմ ժամանակի շէն և պայծառ մնացեալ են բազում վանս և մենաստանս և եկեղեցիս և մատուռս բազում գաւառս և անհամար գիւղօրայս...»[30]։

Աշ. Աբրահամյանը գրել է, թե «այս հիշատակարանը, արժանահավատության տեսակետից, կասկածելի վավերագիր է, որովհետև Դավիթ-բեկը Սյունիք է եկել միայն 1722 թվի վերջերին և ազատագրական լայն աշխա-

---

30 Մ. Ներսիսյան. Դավիթ-Բեկի շարժման արձագանքները Վասպուրականում և հարևան գավառներում.—ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1941, № 5—6, էջ 73—74։ Ընդգծվածը ձեռագրում գրված է կարմրագրով։

տանք ծավալել հաջորդ՝ 1723 թվին, ուստի և չէր կարող Դավիթ-բեկի գործունեության, նրա «զորաշարժի» արձագանքը, այն էլ Վասպուրականում, լինել 1722 թվին»[31]։

Հիշատակարանի հավաստիության նկատմամբ ներկայացված երկու առարկություններն էլ հերքվում են վերը կատարված քննության տվյալներով. Դավիթ-բեկը շարժվել էր Սյունիք 1722 թ. հուլիսի վերջին—սեպտեմբերի առաջին կեսին և խոշոր մարտեր ունեցել մինչև 1723 թ.։ Լուրերը Դավիթ-բեկի գործունեության մասին արագորեն կարող էին հասնել հե՛նց Վասպուրական. Նախիջևանի խանը 12 հազարանոց բանակով արշավեց նրա դեմ, երբ հայոց զորքը դեռ նոր էր հասել Սիսիան[32], իսկ Նախիջևանը Վասպուրականի օսմանյան տիրապետության տակ գտնվող գավառներից գրեթե նույն հեռավորության վրա էր, ինչ Սիսիանից։ Շատ հավանական է, որ Նախիջևանի վրայով էլ հավաստի լուրերն արագ կերպով թափանցած լինեն բովանդակ Վասպուրական։ Պետք է հաշվի առնել նաև, որ Դավիթ-բեկի «զորաշարժությունը» սկսվում է դեռևս Վրաստանում[33]։

1722 թ. հոկտեմբերի 22-ին հեռավոր Ամասիայից Թովմաս վարդապետ Սեբաստացու՝ Մխիթար Աբբահորն հղված նամակը, իր ոչ ստույգ տեղեկություններով հանդերձ, որոշակիորեն ձայնակցում է Լիմ անապատի հիշատակարանին. «...Ի Սպահանու անդր Փարվէզն յարեալ ի վերայ Շահին եւ այլ ուրիշ տաճկի Լէկզի անուանեցեալ շուրջ զԿէնճեցու յարեաւ պատերազմաւ տիրեալ է ի մոտ ժամանակիս, բայց յետոյ ոմն իշխանազարմ յազգէն հայոց 4000 զօրօք կոտորեալ է Լէկզին անդէն, յետոյ Մոսկոֆն մեծաւ բազմութեամբ եկեալ է զՓարվէզինն նուաճեալ։ Զիշխանն հայոց ի թագաւոր օծեալ է, իսկ արքայն պարսից հանդերձ հնազանդելովք fրիստոնեայս արարեալ է...»[34] (ընդգծումը մերն է—Ա. Ա.)։

Ավելի ուշ, XIX դարում, բանահավաք Գալուստ Շերմազանյանի հավաքած նյութերում մի սյունեցի ծերունի պատմում է, որ 1720-ականներին նույնիսկ «խոսք կար, թե մտադիր են նշանակել զԴավիթ-բեկը թագավոր և օծել Տաթևի վանքումն և թե սպասվում է վրաց թագավորեն դեսպան գա և թագ բերե»[35]։

Ամենայն հավանականությամբ, իր առաքելության ամենասկզբում Դավիթ-բեկը շատ ավելի ընդարձակ ծրագրեր է ունեցել. Սիսիանում գտնվելու ժամանակ, տեղեկանալով Նախիջևանի խանի առաջխաղացման մասին, նա ընտրում է թշնամուն ընդառաջ գնալու և ռազմական գործողությունները հնարավորին չափ տարածելու տակտիկան, որը, կարծես, ճիշտ և ճիշտ համապատասխանում էր իրեն վերագրվող ստրատեգիական գծին՝ «միտս ունենալով ազատագրելոյ արիւնածուփ զաշխարհն Հայաստանն»։ Բայց առաջին իսկ բախման ժամանակ ծանր պարտություն կրելով, Դավիթ-բեկն ստիպված է լինում վերանայել իր ռազմաոճը և բոլոր ուժերը կենտրոնացնել Ղափանի ներսում բնավորված մահմեդական ցեղերին ոչնչացնելու և երկրի տարածքի

---

31 Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից. Երևան, 1953, էջ 79։

32 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 2, էջ 120—124։

33 Հետագայում Աշ. Աբրահամյանն, առանց նախկինում իր առաջ քաշած դրույթները հիմնավորապես հերքելու և նկատի ունենալով նույն հիշատակարանի նյութը, գրեց, թե «վասպուրականցիներն օգնության են եկել Դավիթ-բեկին» (Ա. Գ. Աբրահամյան. «Դավիթ-բեկի պատմության» նախագաղափար բնագրի շուրջը, էջ 185. հմմտ. նույնի՝ «Դավիթ-բեկի պատմության» նախագաղափար բնագիրը.—Բանբեր Հայաստանի արխիվների, 1972, № 3, էջ 91)։ Սա էլ մի նոր չհիմնավորված ենթադրություն էր, քանի որ Լիմ անապատի հիշատակարանն այդպիսի բան չի ասում։

34 Պատմութիւն Ղափանցւոց, էջ 95։

35 «Արարատ», 1877, թ. ԺԱ, էջ 416։

քից դուրս մղելու ծրագրի իրականացումը, որը և, Որոտնա բերդի գրավումով, իր փայլուն ավարտն ունեցավ 1724 թ. մարտի 29-ին[36]։

Որոտնա բերդի գրավումից հետո, սակայն, հայոց զորքերը խոշոր պարտություններ են կրում Բարզուշատի և Նախիջևանի ճակատներում[37] և դարձյալ չեն կարողանում զարգացնել իրենց գործողությունները Ղափանի սահմաններից դուրս։ Իսկ որ այդպիսի ծրագիր իրոք գոյություն ուներ, ասում է թեկուզ այն, որ Թորոսը պատրաստվում էր արշավել արևմուտք՝ Օրդուբադի վրա, սակայն, ենթարկվելով Ֆոանգյուլի սադրանքին, շարժվեց արևելք՝ Բարզուշատ (ՊՍԾ, էջ 124—125. հմմտ. Համապատում, էջ 157—158)։

Այսպիսով, վերոշարադրյալից պարզվում է, որ

1. 1722 թ. ապրիլ-հուլիսին Ղափանում անիշխանություն էր տիրում, որի ընթացքում հայ և մահմեդական զինական ուժերը նախապատրաստվում էին անխուսափելի դարձած ընդհարմանը։

2. Դավիթ-բեկի 2000-անոց ջոկատի հավաքագրումը եղել է Քարթլիի թագավոր Վախթանգ VI-ի կողմից՝ շահ Սուլթան-Հուսեյնի հրովարտակի (1722 թ. հունիս) համաձայն Վրաստանում կազմակերպված մեծ զորահավաքի միջոցին՝ 1722 թ. օգոստոսին և սեպտեմբերի առաջին կեսին։ Այդ ժամանակ էլ Դավիթ-բեկը շարժվել է Հայաստան։

3. Սահմանազատվում են մինչև 1723 թ. Ղափանում տեղի ունեցած իրադարձությունները և որոշվում է դրանց հաջորդականությունը (Սիսիանում կայացած զորահավաքից մինչև Դավիթ-բեկի տեղափոխվելը Տաթև)։

ВРЕМЯ И ОБСТОЯТЕЛЬСТВА ВСТУПЛЕНИЯ ДАВИД-БЕКА В АРМЕНИЮ

А. М. АЙВАЗЯН

Резюме

В статье на основе анализа первоисточников по истории армянского освободительного движения 1720-х гг. выявлено, в частности, следующее: 1. В Капане (Сюнике) апрель—июль 1722 г. явились периодом безвластия, в течение которого армянские и мусульманские военные силы региона активно готовились к ставшему неизбежным столкновению; 2. Давид-бек набрал 2000 армянских воинов (часть которых составляли тифлисские армяне) в период большой мобилизации в Грузии, организованной царем Картли Вахтангом VI в августе—первой половине сентября 1722 г. согласно указу (июнь 1722 г.) шаха Султан-Хусейна. В это же время Давид-бек со своим войском вступил в Армению; 3. Разграничиваются события, происшедшие сразу после вступления Давид-бека в Сюник и до 1723 г., уточняется их последовательность (от проведенной Давид-беком мобилизации в гаваре Сисиан до его переезда в Татев).

---

36 Ս. Շահումյանը Ղափանի «թուրքերի» վերջին հենակետը համարում է Զեռ բերդը (ՊՍԾ, էջ 124. հմմտ. Համապատում, էջ 157)։ Բայց, ինչպես դիտենք, Զեռն գրավվել է Որոտանից առաջ (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 2, էջ 131, ծան. 48)։ Շահումյանն, բա՛ց երևույթին, նկատի է ունեցել բուն Ղափանի տարածքը (Որոտնա բերդը մտնում էր Սիսիան գավառի մեջ)։

37 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 2, էջ 130—133։